ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/8570/02/25

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

20 օգոստոսի 2025թ | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի **դատավոր Գ. Վարդանյանս**, քննության առնելով «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերությունն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 28.07.2025թ. կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ. օգոստոսի 15-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 28.07.2025թ. կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Էլեկտրոնային եղանակով վարվող գործը դատավոր Գ. Վարդանյանին է մակագրվել 2025թ. օգոստոսի 15-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2025թ. օգոստոսի 18-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերությունն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 28.07.2025թ. կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/8570/02/25 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թ. սեպտեմբերի 26-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2025.08.20 20:56:25 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am